

# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ՄԱՏԵԱՆՔ

ԾԱՂԿԱԲԱՆԻ ՀԱՏՈՒԱԾՔ ՅՈՏՄՐԱԶԳԻ ՄԱՏԵԱՆՔ : - Մասն Ա. Արքակի . յորում ճարտասանութեան և դրագիտութեան հետամուտ եղողք հաւաքեալ կը գտնեն հատընտիր օրինակներ ՚ի զանազան հին մատենագրաց . (Պլուտարք , Դիմութն , Թէստրատ , Եստինես , Լիտոս , Սաւուտիոս , Յուստիոս կեսար , Կիլիստն , Տակիպոս , Սէնէկա , Պլինիոս իշխուեցն և այլն) . և ՚ի նորոց (Ֆէնէլոն , Պաստէ-է , Ֆլէշէ-է , Մասագրոն , Մասահլէ-է , Պի-ֆրան , Պէտոն . Սէն Բէեր , Պաշտէւեմի , Թոմաս , Սավանափի , Ֆրէնէինուս , Հէնուլ , Վաշէ-է , Նէտէ-է , Շարուպիան , Թիէ-է , Լամարտին , Շէլլէ-է , Տորի . Դասույ , Պէտր , Պէլապոյ , Գամառ . Կոշչի , Քրիստ . Գալումպոս , Մանշանի , և այլն) . բաժանեալ ըստ զանազան ոճոյ գրութեան , որք են Պատմականիք , Նկարագրականիք , Սահմանականիք , Առակիք , Այլաբանութիւնիք , Բարոյականիք և Կրօնականիք , Նկարագիրք ազգաց , Կենդանագիրք անձանց և Զուգակշիռք , Բարոյական նկարագիրք , Նամակիք , Յառաջարանիք , Ճարտասանականիք , Վերջաբանիք . և այս այլ և այլ կերպ գրութեանց դիւրագոյն վարժելու և դիտողութեանց արժանի օրէնքն ալ աւանդուած են ՚ի սկիզբն ամեն նոր մասմին՝ ՚ի Մարմոնթելէ կամ ՚ի Լահարբէ . և բովանդակ գործոյն ՚ի կանխաբանութիւն՝ իբրև պատուէր ոճոյ ընդհանուր գրութեան՝ դրուած է Պիւֆֆոնի Կանոնի արուեստի Մատենագրութեան Գաղլ . ակադեմիային յօդանալու ձառին գլխաւոր մասը :

ԽԱՍԻՆԻ (Լուդովիկ) ԳԵՐԹՈՒԾԾ Ի ԿՐՕՆՍ ՚ի վեց երգս . թարգմանեալ ոտանաւոր և յանդաւոր չափմամբ ՚ի Գեր . Եղիսաբէթ արքեպիսկոպոսէ ՀիհրՄիհջ . ազդու և գեղեցիկ քերթուած ըստ նիւթոյն , որոյ յարգն աւելի ևս յայտնի ընելու համար դնենիք հոս Յ. Մ. Ռուսոսյի գատաստանը դործոյն յառաջաբանութենէն քաղելով . « Որ չափ և գերապանծ է քերթուածն իրօնից ըստ « մեծութեան իրացն՝ զոր երգէ , մարթ է ասել « թէ նոյնչափ և եղանակ երգոյն լոցէ զարմանալի , և թէպէտ նկատիցէմք ՚ի նմա զհաւաքումն , զըն « տրութիւն և զիորով ցուցակութեանցն , և թէ « զյօրինուած և զհանձարեղ կարգաւորութիւն « նոցին . որք ճարտար արուեստիւ քերթովին զմի . և մեանս բացատրելով այնպէս լուսաւոր և կորո . « վի յարդարեն զքերթուածն , զի անհնար է և « կարի իսկ զաշացու և յամառ անհաւատու « թեան զդէմ ունել նմին :

« Բայց քանզի նորին իսկ զօրութեան քեր « թուածոյս մարթէր անհաջոյ լինել ՚ի միտս յու « լովագունից՝ որ ոչ ախորժեն զօդտակարն ա « ռանց զուարձութեան , և որք մտադիւրագոյնս « փոխանակեն զօդուտ ընդ ախորժից՝ քան զա « խորժս ընդ օգտի , հոգացաւ քերթովս ստէպ և « ճոխ այլակերպութեամբ նկարագրութեանցն « զորս սփուէ ընդ քերթուածն առ հասարակ , և « վայելութեամբ բացատրութեանցն՝ ախորժելի « առնել զայն : Որպէս զի եթէ երբէք արժանիցէ « կոչել զքերթութիւն՝ բարբառ դից , զաա ար-

« ժան է կոչել բարբառ Աստուծոյ , որ ինքնին « իսկ թուի ՚ի սմա բարբառել ՚ի ձեռն այնորիկ՝ « յոր ազգեաց զատագովութիւն կրօնիցն իւ « բոց » :

ՂԱԶԱՐԱՅ ՓԱՐՊԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵԿ ԹՈՒՂԹԱՌ ՎԱՀԱՆԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ . առձեռն փոքրադիր տպագրութիւն քանի մը կարեւոր ծանօթութեամբք , ըստ ոճոյ նախնի ընտիր մատենագրաց , երեք Դրուագ բաժնած , այսպէս կոչելուն համար պատմագրին իր գրոց մասերը , ինչպէս որ իրաւցնէ ալ երեք գլխաւոր մասն ունի պատմութիւնը : Պատմագրիս այս գործոյս նոր օրինակ՝ քան ինչ որ 80 տարիէ ՚ի վեր ունինք , ձեռք բերած չըլլանուս՝ միայն յայտնի վրիպակներն ուղղած ենք . այլ Ս. Սահակոյ տեսլեան ու մեկնութեանը մէջ՝ ըստ հնագոյն և ընտրելագոյն ճառընտիր օրինակաց՝ առաւելապէս ուղղագրութիւններ ըրած ենք : Իսկ Թուղլը Պ. Մկրտիչ Էմին հմուտ գրագիտին հրատարակածին վրայէն տպագրուած է . բայց ցարդ մէկ ձեռագիր օրինակ գանուած ըլլալուն՝ կան տարակուսական և ուղղութեան կարօտ մասեր , զորս նոյնապէս թողած ենք , ըստ առաջին տպագրուղաց . միայն անոնց աչքէն վրիպածն ուղղագրելով , յորոց գլխաւորագոյնն է ձեռաթից յետ և առաջ խառնակ կազմութեան պատճառաւ կարգէն դուրս դանուող երկայն հատուած մը մտադիր քննութեամբ ըստ կարգի գասաւոր գործութեանիս , յորում տակաւին (էջ 593) ըստ ամենայնի չկապուիր իմաստը՝ հատուած մը պակաս ըլլալուն :

ՏԱԿԻՏԵԱՅ ԿՈՒՌԵԼԻՈՍԻ ՏԱՐԵԳԻՐՔ ՍԿՍԵՌԱ Ի ՄԱՀՈՒԱՆ ՄԵԽԱՆ ԱԴՐԱՆԱՐԴԱՅ ԱՐԵՎԵՊԻՒԹԻՒՆ ՀԻԻՐՄԻԻԶ : Տակասոսի Տարեգիրքն իրեն դլուխ գործոցը կը համարուի , և կը բովանդակէ չորս ինքնակալաց ժամանակ , Տիբերի , Կալիգոլայ , Կլաւդեայ և Ներոնի . բայց Կալիգոլայ ժամանակին պատմութիւնն ամբովզ կորսուած է , և Կլաւդեայ՝ միայն վերջին մասը մեզի հասած է : Իսկ պատմագրիս գովեսաը դնենք հոս ըստ հայկաբան թարգմանչին համառատ վկայութեանը . « Ոչ ոք ՚ի պատմագրաց հաւասարէ ոճոյ նորա . ամենայն ուրեք ՚ի պատմութեան իւրումսիրելի առնել զառաքինութիւն , « և ատելի զյուռութիւն . տեսութիւնք նորա հան « ճարեղք և խորազնինք . պեղէ զիսորս սրախից առանց ճգան և բանի հետազօտութեան : Ի համառատութեան անդիւրում հզօր են ասացուածք « նորա . և նկարագիրք կենդանատիալք և ճշգրիտք՝ « առանց արուեստակեալ զարդուց . և է յամենայն ժամանակի գովեալ առ իմաստունս որպէս « օրինակ պատմագրաց :

## Ա Զ Դ

ԲՈՂՄԱՎԵՊԻ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԸ եռամսեայ՝ ապրիլ, յուլիս, հոկտեմբեր, յունուար ամսոց մէջ կը հրատարակուի։

Ընկերագրութեան քաղաքներն են և. Պուլիս' Սեղրոս Խան ու Վենետիկ՝ վաճառ Միհրարեանց։

Տարեկան գինն է ֆր. 12.

Այս Պըակիս գինն է ֆր. 3

---

## A V I S

La REVUE POLYHISTORE *trimestrielle*, paraît dans les mois d'avril, de juillet, d'octobre et de janvier.

On s'abonne à CONSTANTINOPLE, à *Seghpos Khan*, à *Galata* dans la rue *Perschembé bazar* : à VENISE, au Couvent des PP. Mékhi-tharistes, de l'île de S. Lazare.

Le prix annuel 12 francs.

Le prix de cette livraison 3 francs.

